ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ Տաթևիկ Խաչատրյանի՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Տաթևիկ Խաչատրյան, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության մոնիթորինգի բաժնի պետ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (Վիեննա), 2025 թվականի օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 6-ը:

Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ (UNODC):

Գործուղման նպատակը՝ մասնակցություն ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) անդամ երկրների կոնֆերանսի (CoSP) Կիրարկման վերանայման խմբի (Implementation Review Group) 16-րդ նստաշրջանի երկրորդ վերագումարվող նիստին, Ակտիվների վերականգնման (Asset Recovery) հարցերով աշխատանքային խմբի 19-րդ նիստին և Միջազգային համագործակցության հարցերով աշխատանքային խմբի 14-րդ նիստին:

Քննարկված թեմաները՝ Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի գործունեությունը, Կոնվենցիայի կատարման կարգավիճակը. տեղեկատվության, կիրառվող մեթոդների և կոնվենցիայի կատարման ընթացքում ձեռք բերված փորձի փոխանակում, Կոնվենցիայի շրջանակում տրամադրված տեխնիկական աջակցություն, իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության շրջանակում լավագույն փորձը և մարտահրավերները կոռուպցիոն բնույթի

հանցագործությունները բացահայտելու և կանխարգելելու, ինչպես նաև ակտիվների վերադարձը և վերականգնումը հեշտացնելու նպատակով:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Կոնվենցիայի կիրարկման վերանայման խմբի (IRG) նիստին Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետությանը տրված հանձնարարականների կատարման ընթացքը և դրանց ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները՝ Կիրարկման վերանայման մեխանիզմի երկրորդ շրջափուլի ՀՀ վերաբերյալ զեկույցի ընդունումից ի վեր՝ անդրադառնալով հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի ամրապնդմանը, բարեվարքության ստուգման մեխանիզմների շարունակական կատարելագործմանը, հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացներում ներառականության ապահովման գործող մեխանիզմներին:

Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է Կոնվենցիայի II և V գլխուներում ամրագրված դրույթների շրջանակներում Հայաստանի Հանրապետության ձեռքբերումները, Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզմի հաջորդ փուլի անցկացման վերաբերյալ (կառուցվածք, թեմատիկ հաջորդականություն, տեխնիկական աջակցութուն) առաջարկություններ՝ պարտավորությունների գնահատման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Տաթևիկ Խաչատրյանը մասնակցել է Կոնվենցիայի կիրարկման վերանայման մեխանիզի երկրորդ փուլի վերաբերյալ Կատարի Պետության կողմից ներկայացված բանաձևի զրոյական նախագծի շուրջ քննարկմանը, որի շրջանակում նախորդել էին ոչ պաշտոնական քննարկումներ՝ հեռավար ձևաչափով: Վերջնական բանաձևի նախագիծը քննարկվելու է սույն թվականի դեկտեմբերի 15-ից 19-ը Դոհայում (Կատարի պետություն) կայանալիք CoSP 11-րդ նստաշրջանին:

Ակտիվների վերականգման վերաբերյալ աշխատանքային խմբի քննարկումներին Տաթևիկ Խաչատրյանը ներկայացրել է ապօրինի ծագում ունեցող

գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործմանն ուղղված գործողությունները, որոնք նախատեսված են հակակոռուպցիոն ռազմավարության և դրա 2023-2026թթ. գործողությունների ծրագրով, ինչպես նաև ընթացիկ աշխատանքները՝ ուղղված նշյալ գործողությունների կատարման ապահովմանը:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման
և մոնիթորինգի վարչության
մոնիթորինգի բաժնի պետ՝

Տաթևիկ Խաչատրյան
09.09.2025թ.